Աջակցություն ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը

Հոկտեմբեր 2016
3-րդ թողարկում

Ամենամսյա հաղորդագիրը պատրաստվել է «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի շրջանակներում
Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության Հայաստանի համար ԵՀԳ ծրագրի կողմից

Այս թողարկման մեջ

Նորություններ 1
Առաջիկա միջոցառումներ 2
«Եկե՛ք ծանոթանանք...» 3

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներքին կարողությունների զարգացման փաթեթի նեքո իրականացվող դասընթացներ

Որպես շարունակություն ս/թ սեպտեմբեր ամսվա ընթացքում «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի կողմից ներքին կարողությունների զարգացման փաթեթի նեքո իրականացվող դասընթացների շարքին՝ «Ռազմավարական պլանավորում» թեմայով ևս մեկ դասընթաց անցկացվեց Գորիսում: Դասընթացն իրականացվել է հոկտեմբերի 6-ից 7-ը: Ավելին դասընթացի մասին այստեղ:



Ռազմավարական պլանավորումը կազմակերպության կազմակերպական կառավարման ամենագլխավոր գործիքներից մեկն է, որը սահմանում է կազմակերպության գործունեության ուղղվածությունը և նպատակը: Մեր ծրագիրը հատուկ կարևորություն է տալիս այս թեմային: «Ռազմավարական պլանավորում» դասընթացը օգնում է մասնակիցներին խորացնել իրենց պատկերացումները կազմակերության տեսլականի և առաքելության, նպատակների սահմանման գործընթացի և այդ նպատակներին հասնելու համար համապատասխան մոտեցումների մշակման վերաբերյալ:

Ս/թ նոյեմբեր ամսվա ընթացքում նախատեսվում է իրականացնել «Ռազմավարական պլանավորում» թեմայով ևս 3 դասընթաց բոլոր այն ՔՀԿ-ների համար, որոնք դեռ չեն հասցրել մասնակցել այս դասընթացին:

Արտաքին կարողությունների փաթեթի շրջանակներում իրականացվող առաջին դասընթացի մեկնարկ

«Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի գլխավոր նպատակներից մեկն է զարգացնել Հայաստանի ՔՀԿ-ների արտաքին կարողությունները: Արտաքին կարողությունների փաթեթի նպատակն է հզորացնել ՔՀԿ-ներին ուժեղ ցանցերի և բարենպաստ վարչական միջավայրի ստեղծման միջոցով, ինչպես նաև տրամադրել ՔՀԿ-ների արտաքին կարողությունները զարգացնող գործիքներ:

«Հաղորդակցության հմտություններ» թեմայով դասընթաց

Ս/թ հոկտեմբերին մեկնարկեց «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի արտաքին կարողությունների զարգացման փաթեթի շրջանակներում նախատեսված «Հաղորդակցության հմտություններ» թեմայով առաջին դասընթացը: Թվով երեք դասընթացներ իրականացվեցին Երևանի և հարակից մարզերի, ինչպես նաև Հայաստանի հյուսիսային և հարավային մարզերում գրանցված ՔՀԿ-ների համար:

Դասընթացները տևեցին 3 օր: Դրանք անմիջականորեն արտացոլում են Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների զարգացման կարիքների գնահատման արդյունքում բացահայտված կարիքները:

«Հաղորդակցության հմտություններ» դասընթացը տրամադրում է տեսական գիտելիքներ հաղորդակցության գործընթացի և դրա տարատեսակների ու բաղադրիչների՝ միջոցներ, կապուղիներ, գործիքներ և փուլեր, արդյունավետ բանավոր և գրավոր ներկայացման հմտություններ, ներքին հաղորդակցություն՝ ներառյալ խնդիրների լուծում և արդյունավետ թիմային հաղիպումներ, կազմակերպության բրենդի ստեղծում, համագործակցություն ԶԼՄ-ների հետ, ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրերում հաղորդակցության և տեսանելիության ապահովում և այլն:

Արդյունավետ հաղորդակցությունը այն կարևորագույն հմտություններից մեկն է, որին պետք է տիրապետի ցանկացած կազմակերպության թե՛ ղեկավար, թե՛ աշխատակից: Դա մի գործիք է, որը կօգնի և հնարավորություն կտա կազմակերպութեններին հասնելու իրենց նպատակներին և/կամ ցանկալի արդյունքների:

Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից:
Ծրագիրն իրականացվում է Պողլասկայի շրջանային զարգացման հիմնադրամի և «ԴԱՍ.ԱՄ»-ի կողմից:

Սույն հաղորդագիրը պատրաստվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հաղորդագրի բովանդակության համար պատասխանատվություն է կրում միայն «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագիրը, և այն որևէ ձևով չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:

«Հաղորդակցության հմտություններ» թեմայով դասընթացների անցկացման նպատակով «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի կողմից հատուկ հրավիրվել էր միջազգային դասընթացավար՝ Աննա Գապինսկան (տե՛ս հարցազրույցը վերջին էջում)։ Դասնթացները իրականացվում էին Աննա Գապիսկայի կողմից՝ որպես գլխավոր դասընթացավար, ինչպես նաև Մանե Պապյանի և Յարոսլավ Զարիխտայի կողմից՝ որպես աջակցող դասընթացավարներ։

Դասընթացներ իրականացվեցին Երևանում, Վանաձորում և Գորիսում.

- «Հաղորդակցության հմտություններ» թեմայով առաջին դասընթաց անցկացվեց Երևանում ս/թ հոկտեմբերի 19-ից 21-ը։ ՔՀԿ-ների շուրջ 20 ներկայացուցիչներ ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին դասընթացին։ Ավելին դասընթացի մասին այստեղ:
- Նույն մոդուլը կրկնվեց Գորիս քաղաքում ս/թ հոկտեմբերի 26-ից 28-ը։ Ավելին դասընթացի մասին այստեղ:
- Եվ «Հաղորդակցության հմտություններ» թեմայով վերջին դասընթացն իրականացվեց Վանաձոր քաղաքում ս/թ հոկտեմբերի 31-ից մինչև նոյեմբերի 2-ը։ Ավելին դասընթացի մասին այստեղ:

Ջեյմս Հյումն ասել է. «Հաղորդակցության արվեստը առաջնորդության լեզուն է»։

Մենք լիահույս ենք, որ մեր դասընթացները օգնեցին մասնակիցներին քայլ առաջ կատարել այդ արվեստին տիրապետելու հարցում։

Քոուչինգ

Երբեմն կազմակերպությունները կամ մարդիկ կարիք ունեն մի փոքր աջակցության կամ ուղղորդման իրենց նպատակներին հասնելու համար։ «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի կողմից որպես ընթացիկ աջակցություն տրամադրվող քոուչինգը և անհատական և/կամ ինստիտուցիոնալ խորհրդատվությունը հրաշալի տարբերակ է ՔՀԿ-ների համար, որը հնարավորություն է տալիս վերջիններիս արդյունավետ կերպով զարգացնել իրենց կազմակերպությունների կարողությունները։

Ուրախ ենք, որ մեր ծրագրի կարողությունների զարգացման նախագծում ընդգրկված մի շարք ՔՀԿ-ներ մեծ հետաքրքրություն են ցուցաբերել ծրագրի այս բաղադրիչի նկատմամբ և օգտվել են այս ծառայությունից՝ ստանալով խորհուրդներ ներքին և/կամ արտաքին կարողություններին վերաբերող մի շարք թեմաներով, ինչպիսիք են ծրագրի մշակում, թիրախային խմբի կարիքների բացահայտում, խնդիրների բացահայտում և դրանց լուծումների մշակում, ռազմավարական պլանավորման բաղադրիչներ, կազմակերպության առաքելություն, տեսլական և նպատակ, ներքին հաղորդակցություն, հաղորդակցության ռազմավարություն կոնսորցիումների ստեղծման և գործընկերություն հաստատելու նպատակով, ԵՄ տեսանելիության ուղենիշներ և այլն։

Այս գործողությունը կրում է ընթացիկ բնույթ և իրականացվելու է Ծրագրի իրագործման ողջ ընթացքում։

Առաջիկա միջոցառումներ

- ✓ «Ռազմավարական պլանավորում» թեմայով թվով երեք դասընթաց Երևան քաղաքում և հյուսիսային մարզերում, 2016թ. նոյեմբեր
- ✓ Ծրագրի մեկամյա գործունեության ամփոփում և ենթաղրամաշնորհային նախագծի ներկայացում, 2016թ. նոյեմբեր
- ✓ Ընթացիկ ուղղորդում (քոուչինգ) և անհատական և/կամ ինստիտուցիոնալ խորհրդատվություններ, 2016թ. նոյեմբեր
- ✓ Ծրագրի պաշտոնական կայքի բացում, 2016թ. նոյեմբեր

«Եկե՛ք ծանոթանանք...»

Աննա Գապիևսկա՝ «Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի միջազգային դասընթացավար

Աննա Գապիսկան դասընթացավարման, կրթության և հասարակության հետ կապերի բնագավառում 10 տարվա աշխատանքային փորձ ունեցող որակավորված կյանքի և կարիերայի հարցերով քոուչ է: Աննան ազգությամբ լեհ է, սակայն արդեն 8 տարուց ավել է, ինչ բնակվում է Իռլանդիայում/Դուբլինում:

Իր մասնագիտական գործունեության ընթացքում նա աջակցել է անհատների և կազմակերպությունների՝ տրամադրելով նրանց դասընթացներ, խորհրդատվական ծառայություններ հաղորդակցության հմտություններ, միջանձնային հարաբերություններ, թիմային աշխատանքի ստեղծում, հակասությունների լուծում և այլ թեմաներով: Այժմ նա կենտրոնացրել է իր գործունեությունը կանանց աջակցություն տրամադրելու վրա՝ օգնելով նրանց սկսել և զարգացնել իրենց մասնագիտական գործունեությունը, կայացնել իրենց բիզնեսը՝ կանոնավոր կերպով անցկացնելով սեմինարներ և քոուչինգի սեսիաներ նրանց համար:

Քոուչինգի ընթացքում նա օգնել է իր հաճախորդներին ավելի լայն կերպով նայել իրենց կարիերային, վերանայել/վերամշակել այն, հասկանալ կարիեայի արժեքները, համոզմունքները, ուսումնասիրել անձնական կարիքները: Մասնագիտությամբ լինելով ուսուցչուհի (Լոդզի Համալսարան/Լեհաստան)՝ նա նաև աշխատում է միջնակարգ դպրոցում՝ աջակցելով աշակերտներին նպատակային, գիտակված և տեղեկացված անձնական մասնագիտությունների ընտրության հարցում:

Դուք առաջին անգամ եք դասընթաց անկացնում Հայաստանում, ի՞նչ տպավորություններ ունեք: Որքանո՞վ են դրանք Ձեզ դուր եկել:

Կարծում եմ դասընթացները կազմակերպված էին լավ, բարձր մակարդակով, իսկ մասնակիցները իսկապես ներգրավված էին, աշխատում էին պատրաստակամորեն և շատ ակտիվ էին: Շատ մեծ ներդրում կար շահառուների կողմից դասընթացին. նրանք կիսվում էին իրենց փորձառությամբ մյուս մասնակիցների հետ, քննարկում էին, ինչը շատ մեծ արժեք ունի բոլորի համար: Ես գտնում եմ, որ դասընթացները չափազանց արդյունավետ են և լիահույս եմ, որ կտան իրենց արդյունքները ապագայում:

Ի՞նչ դժվարությունների եք հանդիպել դասընթացների ընթացքում:

Մասնակիցները այնքան ակտիվորեն էին մասնակցում խմբային քննարկումներին և հարցերին, որ երբեմն դժվար էր լինում պահել դասընթացով նախատեսված ժամանակը: Նշեմ նաև, որ բարձր չափորոշիչների պատճառով հայերը երբեմն քննադատական վերաբերմունք են ցուցաբերում իրենք իրենց և այլ անձանց նկատմամբ: Այս տեսակ վերաբերմունքը կարող է հիանալի միջոց լինել ավելի լավին ձգտելու հարցում, սակայն, միևնույն ժամանակ, մի փոքր դժվար է ապրել և գործել այդկերպ:

Բացի այդ, իրական դժվարություն էր հասնել որոշ վայրեր առատ ձյան պատճառով, ինչը շատ հազվադեպ կարելի է հանդիպել Իռլանդիայում:

Ի՞նչ կարծիք ունեք հայաստանյան ՔՀԿ-ների վերաբերյալ: Ինչպե՞ս կգնահատեք դրանց զարգացման/կարողությունների մակարդակը:

Ես կարծում եմ, որ Հայաստանի ՔՀԿ-ներն առաջին հերթին հզոր են մարդկանց պոտենցյալով: Ես հանդիպեցի հրաշալի անհատների՝ բաց, հմուտ և համագործակցու պատրաստակամությամբ լի, ինչը չափազանց կարևոր ցուցանիշ է իրենց կազմակերպությունների ապագայի համար, ինչպես նաև գործընկերություններ ստեղծելու համար: Հենց համագործակցությունն է այն հիմքը, որի վրա կառուցել են իրենց դիրքերը իռլանդական ամենահաջողակ ՔՀԿ-ները:

Ի՞նչն է Ձեզ առավել շատ դուր եկել Հայաստան կատարած Ձեր այցի ընթացքում:

Առաջինը մտքիս եկան հայկական մշակույթն ու հայերի գեղարվեստական ոգին: Ինձ նաև շատ է դուր եկել այստեղի խոհանոցը, արևի տակ աճեցված մրգերի ու բանջարեղենների թարմությունը. Իռլանդիայում մենք դրանցից շատ չունենք: Սրճարանները, որտեղ ես կարող եմ վայելել իմ ***«սուրճը»***: Ես հիացած եմ անկրկնելի ուրվագծեր ունեցող լեռնային լանդշաֆտներով, մեծ բավականություն եմ ստացել Զորաց Քարերից: Եվ ևս մեկ բան՝ ինձ շատ է դուր գալիս, թե ինչպես է հնչում հայոց լեզուն: ***«Շնորհակալություն»***:

«Աջակցություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունների հզորացմանը» ծրագրի նպատակն է զարգացնել Հայաստանում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կարողությունները՝ որպես երկրում զարգացում ապահովող անկախ մարմիններ՝ նրանց դարձնելով առավել բանիմաց, քաղաքացիների կարիքներին արձագանքող, և ակտիվորեն աջակցել երկրի զարգացմանը գործնական, ծրագրային մոտեցումների միջոցով:

Ծրագիրն իրականացվում է Պոդլասկայի շրջանային զարգացման հիմնադրամի (Podlaska Fundacja Rozwoju Regionalnego)և «ԴԱՄ.ԱՄ»-ի կոնսորցիումի կողմից:

Ծրագիրը մեկնարկել է 2015թ. հոկտեմբերի 1-ին: Ծրագրի տևողությունը 3 տարի է:

Կոնտակտային տվյալներ

Հասցե՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոն
Ալեք Մանուկյան 9, 312 գրասենյակ, 0070 Երևան, ՀՀ
Հեռ.՝ (+374 41) 95 39 35
Էլ. փոստ՝ info@civilsociety.am
Ֆեյսբուք՝ facebook.com/StrongCSOs